Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-896-12.05.2010,19.07.2010-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի

ա) 10-րդ մասը «դասարան» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքի:»:

բ) 11-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«11. Ուսումնական տարվա ընթացքում 120-ից 200 ժամ բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրելու հարցը որոշվում է համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան կարգի՝ հետևյալ դեպքերում՝

ա) միջնակարգ կրթության առաջին և երկրորդ աստիճանի կրթական ծրագրին մասնակցությունից բացակայելու դեպքում՝ տվյալ ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդի կողմից,

բ) միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն մասնակցությունից բացակայելու դեպքում, տվյալ ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Սույն մասում սահմանված դեպքերում, դրական որոշում ստացած սովորողը հանձնում է քննություն՝ ուսումնական պլանով նախատեսված հինգ առարկաներից, ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ:

Քննությունից անբավարար ստանալու, փոխադրման մասին որոշում չընդունելու կամ 200 ժամից ավելի բացակայելու դեպքում՝ սովորողը կրկնում է ուսումնական պլանով սահմանված տվյալ դասարանի ծրագիրը:»:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը «իրականացնում է» բառից հետո լրացնել «սույն օրենքով,» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Երկրորդ ընթերցման ներկայացվող «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի

N	առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը.	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը).	առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը).	առաջարկության վերաբերյալ հեղի- նակի (հիմնական զեկուցողի) եզրա- կացությունը
1	ՀՀ կառավարութ-յուն	Նախագծի 1-ին հոդվածի «ա» կետ	«՝ բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքի:» բառերը փոխարինել «Սովորողը (12-րդ դասարանի) կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը: Տվյալ ուսումնական տարվա ծրագիրը չյուրացրած 12-րդ դասարանի սովորողը դուրս է մնում հանրակրթությունից:» բառերով	Չի ընդունվել
2	Անահիտ Բախշյան		Շարադրել հետևյալ կերպ. «Ուսումնական տարվա ընթացքում այն աշակերտները, ովքեր իրենց կարողություններին և պահանջ-մունքներին համապատասխան ներգրավված են առկա (ստացիո-նար) կրթության ձևի մեջ, մինչև 120 ժամ դասերից բացակայելու դեպքում նրանց հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրելու հարցի որոշման ընդունման կարգը սահմանում է պետական կառա-վարման լիազորված մարմինը, իսկ որոշումն ընդունում է համա-պատասխան մանկավարժական խորհուրդը: 120 ժամից ավելի բացակայությունների դեպքում սովորողին տրվում է կրթության իրականացման ձևը փոխելու իրավունք՝ առկա հեռակա կամ դրսեկության ձևի: Ուսումնական տարվա ընթացքում այն աշակերտները, ում համար իրենց կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են հեռակա և դրսեկության ձևերով, նրանց հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրվելու հարցը պետք է որոշվի սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթության կազմակերպման կարգի համաձայն, որի պահանջը դրված է ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի «Հանրակրթության բնագավառում կրթության պետական կառավարման մարմնի իրավասությունները» վերնագրով հոդվածի 19-րդ կետում:	Ընդունվել է մասսամբ

	Անահիտ Բախշյան			
3		Նախագծի 1-ին հոդվածի «բ» կետ	2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ ձևով. «Սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան չփոխադրվելու դեպքում սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը»:	Ընդունվել է
4	Լիլիթ Գալստյան Արծվիկ Մինասյան Արա Նռանյան		Շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝ Ուսումնական տարվա ընթացքում 180-ից 200 ժամ դասերից բացակայած սովորողին հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրելու, ինչպես նաև դասընթացը կրկնելու վերաբերյալ հարցը որոշում է ուսումնական հաստատության խորհուրդը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով: Ուսումնական տարվա ընթացքում 200-ից 300 ժամ դասերից բացակայած սովորողին հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրելու, ինչպես նաև դասընթացը կրկնելու վերաբերյալ հարցը, ուսումնական հաստատության խորհրդի երաշխավորությամբ, որոշում է լիազոր մարմինը (ըստ ուսումնական հաստատության ենթակայության՝ կրթության պետական կառավար-ման լիազորված մարմինը, պետա-կան տարածքային կառավարման մարմինը)՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով: 300 ժամից ավելի բացակայած սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:»	Չի ընդունվել
5	պատգամավորԿ. Ավագյան		«11. Ուսումնական տարվա ընթացքում 120- ից 200 ժամ բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրելու հարցը որոշվում է համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի	Ընդունվել է

			սահմանած համապատասխան կարգի՝ հետևյալ դեպքերում՝ ա) միջնակարգ կրթության առաջին և երկրորդ աստիճանի կրթական ծրագրին մասնակցությունից բացակայելու դեպքում՝ տվյալ ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդի կողմից, բ) միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն մասնակցությունից բացակայելու դեպքում, տվյալ ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից: Սույն մասում սահմանված դեպքերում, դրական որոշում ստացած սովորողը հանձնում է քննություն՝ ուսումնական պլանով նախատեսված հինգ առարկաներից, ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ: Քննությունից անբավարար ստանալու, փոխադրման մասին որոշում չընդունելու կամ 200 ժամից ավելի բացակայելու դեպքում՝ սովորողը կրկնում է ուսումնական պլանով սահմանված տվյալ դասարանի ծրագիրը:»:	
6	ՀՀ կառավարութ-յուն		Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ուսումնական տարվա ընթացքում 180ժամ և ավելի դասերից բացակայած հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի հետագա ուսումնառությունը կարգավորվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:»	Ընդունվել է խմբագրումով
7		Հոդված 2-րդ	Առաջարկվում է հանել	Խմբագրվել է